

ԹԵՎԱՆ ԴԱՎԹՅԱՆ



ՍՈՎՈՐԵՆՔ

ՇԱԽՄԱՏ

ԽԱՂԱԼ

ԳԻՐԸ 1

ԹԵՎԱՆ ԴԱՎՈՅԱՆ

ՍՈՎՈՐԵՆՔ ՇԱԽՄԱՏ ԽԱՂԱԼ

ԳԻՐԳ ԱՌԱՋԻՆ
ՇԱԽՄԱՏԻ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ, 1994
«ՇԱՂԻԿ»

ԱՈՒՄ ԵՆ՝

դարեր առաջ Հնդկաստանում մի երիտասարդ թագավոր կար: Երա անհոգությունն ու ծուլությունը չարի ու սահման չունեցող երիտասարդ թագավորը նաև մեծամիտ էր ու ինքնահավան: Դա էր պատճառը, որ իմաստուն պալատականները կամաց-կամաց լքեցին նրան: Թագավորը մնաց միայնակ ու դժբախտ, օր-օրի հյուծվեց՝ անկողին րնկավ: Պալատում մնացած վերջին իմաստունը, հասկանալով, որ չարությունից չէ թագավորն ստբարտավան, այլ՝ անխելությունից, որոշեց նրան բուժելու ճար գտնել: Երկար, շատ երկար խորհելուց հետո ներկայացավ թագավորին ու այսպես դիմեց.

- Արքա՛, ես գտել եմ քեզ բուժելու հնարը. դա մի կախարդական խաղ է: Նա, ով իմանա այդ խաղի բազում գաղտնիքները, ձեռք կրեթի արքային վայել իմաստնություն, ժողովրդի առաջնորդին անհրաժեշտ հոգու հարստություն, փառք ու ուրախություն:

Հիվանդ արքայի հետաքրքրությունը շարժվեց, գունատ դեմքին կենդանություն խաղաց:

- Սա անարյուն մի պատերապմի դաշտ է, - փստտե ու խորհրդավոր շարունակեց ծերունին: - Այստեղ կան ճանապարհներ, անտեսանելի բլուրներ, նեղ ու աննշմարելի կածաններ, գետեր ու կամուրջներ...

Թագավորի հետաքրքրությունը գնալով մեծանում էր, իսկ ծերունին պատմում էր ու պատմում: Երիտասարդ արքան կլանված նայում էր մերթ նրա դեմքին, մերթ՝ տախտակին, փորձում հասկանալ ու ճանաչել խաղաքարերի աշխարհը, որը քիչ էր տարբերվում մարդկանց աշխարհից, իր թագավորությունից: Տախտակի վրա արքան տեսնում էր իրեն, իր ողջ թագավորությունը, փորձում կռտեղ հակառակորդի մտադրությունները: Եվ այստեղ նա սարսուռաց՝ հասկանալով իր վարած կարճամիտ ու անհեթեթ քաղաքականությունը: Չէ՞ որ պետության մեջ ամեն մեկը, ինչպես յուրաքանչյուր խաղաքար շախմատի խաղատախտակի վրա, իր տեղն ու դերն ունի և ուշադրություն ու հարգանք է պահանջում:

...Եվ այսպես՝ ծերունին կարողացավ հիվանդ արքային բուժել, խաղն էլ արագ տարածվեց երկրով մեկ...

Դարեր անցան այդ օրերից: Շախմատը շատ երկրներ ճամփորդեց: Ստեղծագործական այս խաղն ամեն մի նոր գիտակին իր ունակությունները դրսևորելու անսահման հնարավորություններ է պարգևում:

Դե ուրեմն՝ ծանոթանանք խաղին...


Իմ կրտսեր բարեկամ, արդեն ինքնուրույն կարդում ես, գրում, հաշվում: Կեցցեն:

Այս գիրքը քեզ կպատմի մի հրաշալի խաղի՝ շախմատի մասին:

Հեղինակը նաև շախմատի ուսուցիչ է. «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի շախմատի դպրոցի տնօրեն: Արդեն երկու տարի այս գրքով շախմատ խաղալ են սովորում կրթահամալիրի հարյուրավոր երեխաներ: Կարդա՛ մինչև վերջ իսկ հետո քեզ կառաջարկենք երկրորդ, երրորդ և չորրորդ գրքերը: Հավատացած եմ՝ քո կյանքում ինչոր բան կփոխվի:

«Շաղիկ»

ՈԱԶՄԻ ԳԱՇՏԻ ԵՎ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ
ԻՆՉՊԵՍ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԷԼ ԱՅՊ ԳԱՇՏՈՒՄ



Շախմատային խաղը՝ *պարտիան*, պատերազմ է, երկու թագավորու թյու նների միջև: Իսկ գրանց գորքերին երկու գորավարներ են առաջնորդում: Այդ գորավարներին շախմատում *հակառակորդ ներ* կամ *մրցակիցներ* են անվանում: Սակայն իրական կյանքում այդ հակառակորդներն, իհարկե, միմյանց նկատմամբ թշնամանք չունեն: Նրանք պարզապես մրցում են իրար հետ: Նրանցից յուրաքանչյուրը, իր գիտելիքների և ընդու նակու թյու նների շնորհիվ, փորձում է խաղ-պատերազմը շահել:


Որո՞ւր են այդ գիտելիքները: Ինչի՞ց սկսել:

Երևի սրդեն լսած լինես մեծերից կամ տեսած՝ ֆիլմերում, որ լավ գորսվարը ցանկապես մարտից առաջ մանրակրկիտ ուսումնասիրում է ռազմի դաշտը՝ մարզագետինները, բլուրներն ու անտառները, գետը... Այսինքն՝ ուսումնասիրում է տեղանքը, որպեսզի կարողանա ճիշտ տեղաբաշխել իր մարտական ուժերը, ճիշտ որոշել գլխավոր հարվածի ուղղությունը: Մի խոսքով՝ մարտը հաջող վարել կարողանա:

Շախմատային գորավարը ևս պետք է շատ լավ ճանաչի իր մարտի դաշտը, որպեսզի հաջողությամբ վարի խաղը:

Շախմատում ռազմի դաշտը, որն այսուհետև *խաղատախտակ* կանվանենք, մի քառակուսի տախտակ է՝ կազմված դարձյալ քառակուսի, իրար հավասար, բայց և մուգ գույնի վաթսունչորս վանդակներից: Այդ վանդակները *դաշտեր* են կոչվում: Բայց գույնինը կանվանենք սպիտակ, իսկ մուգ գույնինը՝ սև դաշտեր (նկ. 1ա):


Խաղն սկսելուց առաջ՝ խաղատախտակը պետք է այնպես տեղադրել, որ յուրաքանչյուր մրցակցի ձախ կողմից առաջին դաշտը սև լինի (նկ. 1ա): Այս դիրքով դրված խաղատախտակի վրա դաշտերը, հաջորդելով միմյանց, կազմում են շերտեր՝ *զծևք*: Չախից աջ ընկած շերտերը կանվանենք *հորիզոնական*




Նկ. 1ա. ԽԱՂԱՏԱԽՏԱԿ

Այն ճիշտ է տեղադրված: Հակառակորդներից յուրաքանչյուրի ձախ կողմում ընկած առաջին դաշտը սև է:

գծեր կամ պարզապես **հորիզոնականներ** (նկ. 1բ), իսկ հակառակորդների միջև ձգվող շերտերը՝ **ուղղաձիգ գծեր** կամ **ուղղաձիգներ** (նկ. 1գ):



Նկ. 1բ. ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆՆԵՐ




Նկ. 1գ. ՈՒՂՂԱԶԻԳՆԵՐ


Նշված գծերը երկարությամբ իրար հավասար են և ութամյան դաշտ են պարունակում: Այսպիսով՝ կատանանք ութ հորիզոնականներ և նույնքան էլ՝ ուղղաձիգներ:

- Բայց այստեղ կարճ ու երկար և թեք շերտեր էլ կան, - իրավացիորեն կնկատես դու:

Իսկ այդ շերտերը կանվանենք *անկյունազծեր*: Ինչպես տեսնում ես, հորիզոնականների և ուղղաձիգների վրա սև ու սպիտակ դաշտերը հաջորդում են միմյանց, այնինչ անկյունազծերից յուրաքանչյուրը կապմված է միևնույն գույնի սև կամ սպիտակ դաշտերից (նկ. 1դ,ե): Ամենաերկար անկյունագիծը պարունակում է ութ, իսկ սամնակալարձը՝ երկու դաշտ:




Նկ.1դ. ՍԵՎ ԳԱՇՏԵՐԻ ԱՆԿՅՈՒՆԱԳԾԵՐ



Նկ.1ե. ՍՅՈՒՍԱԿ ԳԱՇՏԵՐԻ ԱՆԿՅՈՒՆԱԳԾԵՐ

Այս նկարը (2), մեր գրքում խաղատախտակին կփոխարինի: Այն անվանվում է *դիագրամ* (կամ *տրամագիր*):



Նկ.2. ԳԻԱԳՐԱՄ (ՏՐԱՄԱԳԻՐ)

Այժմ, որպեսզի կարողանանք խաղատախտակի դաշտերը միմյանցից պահպանել, փորձենք դրանք անվանակոչել: Այդ նպատակով օգտվենք հատուկ նշագրությունից: Դրա տարրերից են ութ լատինական տառերը, որոնցով ձախից աջ ամրագրվում են ուղղաձիգները. a՝ ա, b՝ բե, c՝ ցե, d՝ դե, e՝ ե, f՝ էֆ, g՝ ժե, h՝ հաջ (դ.3):

3	8	a8	b8	c8	d8	e8	f8	g8	h8
	7	a7	b7	c7	d7	e7	f7	g7	h7
	6	a6	b6	c6	d6	e6	f6	g6	h6
	5	a5	b5	c5	d5	e5	f5	g5	h5
	4	a4	b4	c4	d4	e4	f4	g4	h4
	3	a3	b3	c3	d3	e3	f3	g3	h3
	2	a2	b2	c2	d2	e2	f2	g2	h2
	1	a1	b1	c1	d1	e1	f1	g1	h1
		a	b	c	d	e	f	g	h

Այսպիսով՝ ձախից աջ կու նենանք. a ուղղաձիգ, b ուղղաձիգ, c ուղղաձիգ և այլն: Իսկ մեկից ութ թվանշաններով,

որոնք կկազմեն նշագրության մյուս տարրերը, ամրագրվում են հորիզոնականները: Այսպես՝ ներքևից վերև՝ 1-ին հորիզոնական, 2-րդ հորիզոնական, 3-րդ հորիզոնական և այլն:

4	8	50	11	24	63	14	37	26	35
7		23	62	51	12	25	34	15	38
6		10	49	64	21	40	13	36	27
5		61	22	9	52	33	28	39	16
4		48	7	60	1	20	41	54	29
3		59	4	45	8	53	32	17	42
2		6	47	2	57	44	19	30	55
1		3	58	5	46	31	56	43	18
		a	b	c	d	e	f	g	h

Հիմա, ցանկացած դաշտը ներկայացնելու համար, կօգտըվենք այն ուղղաձիգի տառից և այն հորիզոնականի թվից, որոնց տվյալ դաշտն է պատկանում. օրինակ՝ դ.4-ի թիվ 48 դաշտի անվանումը կազմվում է a ուղղաձիգի a տառից և 4-րդ հորիզոնականի 4 թվից: Այսինքն՝ կստացվի a4: Նույն սկզբում նրով, ասենք, թիվ 25 դաշտը կկոչվի e7 դաշտ, թիվ 39-ը՝ g5, և այլն:

a և h ուղղաձիգները, ինչպես նաև՝ 1-ին և 8-րդ հորիզոնականները կոչվում են խաղատախտակի *կարային գծեր*, իսկ a1, a8, h1, h8 դաշտերը՝ *անկյունային դաշտեր*:

Անկյունագծերը կոչենք դրանց սկզբնական և վերջնական դաշտերի անվանումներով. օրինակ՝ a1-h8 անկյունագիծ, c1-h6 անկյունագիծ, g1-h2 անկյունագիծ, և այլն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ.

Ըստ դ.4-ի համարների հերթականության՝ անվանի՛ր դաշտերը: Սկսում դա կատարի՛ր՝ օգտվելով խաղատախտակի կարերում նշված թվերից ու տառերից, սպա նույնը կրրկնի՛ր՝ ծածկելով թվերն ու տառերը: Գրի՛ առ դրանք և ստուգի՛ր՝ դ.3-ի հետ համեմատելով:

Ահա՛ և դու ծանոթացար շախմատային խաղատախտակին: Այժմ ծանոթանա՛նք այն «գործող անձանց», ովքեր մարտնչում են այդ խաղաղաշտում:

ՊԱՏԵՐԱԶՄՈՂ ԲԱՆԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԴԻՐՔԱՎՈՐՈՒՄԸ


Պատկերացրու՝ դու գորավար ես և առաջնորդում ես քո պորթը, որն իր կազմում ունի ութ անվախ փինվոր, երկու հուժկու և հեռահար նավակ, երկու սեղ լիդ, երկու ճարպիկ ձի, մեկ ամենակարող թագուհի և մեկ «Նորին գերազանցություն»՝ արքա, ում բախտն ամբողջությամբ դո՛ւ ես տնօրինում: Նույն կազմն ունի և հակառակորդիդ բանակը: Այսինքն՝ նախքան ճակատամարտը երկու բանակների մարտական ուժերն իրար հավասար են: Շախմատային լեզվով ասած՝ պարտիան սկսվում է *նյութական հավասարակշռության* պայմաններում: Երկու բանակներն իրարից տարբերվում են գույնով՝ բաց և մուգ: Բաց գույնի բանակը *սպիտակներն* են, իսկ մուգ գույնինը՝ *սևերը*: Այդ բանակների անդամներն ունեն հետևյալ տեսքը.

ԲԱՆԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԸ	ԽԱՂԱՔԱՐԵՐԻ ԻՐԱԿԱՆ ՏԵՍԸ		ԽԱՂԱՔԱՐԵՐԻ ՏԵՍԸ ԳԻՆԳՐԱՄՆԵՐԻ ՎՐԱ	
	ՍԳԻՏԱԿՆԵՐ	ՍԵՎԵՐ	ՍԳԻՏԱԿՆԵՐ	ՍԵՎԵՐ
1 արքա				
1 թագուհի				
2 նավակ				
2 փիղ				
2 ձի				
8 փինվոր				

Շախմատային նշագրության մեջ ընդունված է կրճատ գրանցման հետևյալ կերպը. արքա՝ Ա, թագուհի՝ Թ, նավակ՝ Ն, փիղ՝ Փ, ձի՝ Չ, գինվոր՝ Կ (երկու և ավելի գինվորներ թվարկելու դեպքում՝ ԿԿ):

Արքաները, թագուհիները, նավակները, փղերն ու ձիերը կոչվում են մի ընդհանուր անունով՝ **Ֆիգուրներ**:

Խաղատախտակի վրա խաղաքարերի ցանկացած դասավորությունը կոչվում է **դիրք**: Սկզբնական դիրքում սպիտակներն զբաղեցնում են խաղատախտակի 1-ին և 2-րդ, իսկ սևերը՝ 7-րդ և 8-րդ հորիզոնականները: Ընդ որում՝ երկու կողմերի մարտական ուժերը միմյանց նկատմամբ համաչափ (սիմետրիկ) դիրքեր են զբաղեցնում: Օրինակ՝ սպիտակ նավակները գրավում են a1 և h1, իսկ սև նավակները՝ բնականաբար, a8 և h8 դաշտերը: Դրանց կողքին տեղ են զբաղեցնում ձիերը՝ b1, g1 (b8, g8), ապա փղերը՝ c1, f1 (c8, f8): Որպեսզի չշփոթենք արքայի և թագուհու տեղերը, որոնք կողք-կողքի են կանգնում, հիշենք, սպիտակ թագուհին, սիրահարված իր գույնին, միշտ կանգնում է սպիտակ դաշտում (d1), իսկ սևը, նույն մղումով, սև դաշտում (d8): Ֆիգուրների առջև՝ ամբողջ երկրորդ (յոթերորդ) հորիզոնականով, տեղ են զբաղեցնում գինվորները:



Խաղատախտակի ճախավորմյան մասը (հաշված սպիտակների կողմից), այսինքն՝ ուղղաձիգներ a-ից d-ն, անվանվում է **թագուհու**, իսկ աջավորմյանը՝ ուղղաձիգներ e-ից h-ը՝ **արքայական թև** (դ.5):

Խաղի ամբողջ իմաստն այն է, որ գերվի հակառակորդի արքան, կամ, ինչպես ասում են, նրան *մատ* հայտարարվի (մատ՝ արաբերեն «մահ» է նշանակում):

Այժմ մի բույս պատկերացնենք, որ քո բանակի հիմնական ուժերը թագուհու թևում են գտնվում, իսկ մրցակիցը հարձակողական գործողություններ է ծավալել արքայական թևում՝ ջանալով գերել «Նորին գերապանցությանը»: Եվ դու պետք է հասցնես զորքերդ թագուհու թևից արքայական տեղափոխել, որպեսզի արքայիդ պաշտպանես: Հնարավոր է՝ հասցնես, բայց բացառված չէ նաև՝ ուշանաա: Իսկ եթե զորքերդ դիրքեր գրավեցին ինչ-որ բլուրների վրա, որտեղից լավ է երևում ողջ ռազմի դաշտը, ապա, անհրաժեշտության դեպքում, դրանք առանց դժվարության կտեղափոխվեն և՛ արքայական, և՛ թագուհու թև: Խաղատախտակի վրա այդպիսի բլուրների դեր է կատարում **Կենտրոնը**: Կենտրոնական են համարվում խաղատախտակի d4, d5, e4, e5 դաշտերը:

ՖԻԳՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ԲԱՅԼԵՐԸ

Դու ծանոթացար քո և հակառակորդիդ բանակներին: Այժմ տեսնենք, թե՛ խաղատախտակի վրա ինչպես է շարվում մարտական միավորներից յուրաքանչյուրը:

Խաղատախտակի վրա մի դաշտից մյուսը ֆիգուրների և գինվորների տեղաշարժը կոչվում է **քայլ**:

Խաղն սկսում են սպիտակները, ապա՝ քայլ կատարելու հերթն անցնում է սևերին, նորից՝ սպիտակներին, հետո՝ սևերին և այսպես շարունակ մինչև խաղի ավարտը:

Ո՛չ ֆիգուրը, ո՛չ էլ գինվորը չեն կարող գնալ այն դաշտը, որը տվյալ պահին զբաղեցնում է նույն բանակի խաղաքարը:

Ձիուց բացի ոչ մի ֆիգուր (գինվոր) չի կարող քայլել իր ճանապարհին գտնվող որևէ խաղաքարի վրայով:


Ձիու այս ինքնատիպ հատկությունը **քառակ** անվանենք:



Նավակը հորիզոնականներով ու ուղղաձիգներով է քայլում և մեկ քայլով կարող է տվյալ հորիզոնա-

կանի կամ ուղղաձիգի ցանկացած դաշտը տեղափոխվել:

6



Օրինակ՝ դ.6-ում d4-ի սպիտակ նավակը կարող է d ուղղաձիգի կամ 4-րդ հորիզոնականի ցանկացած դաշտը գնալ (ընդամենը՝ 14 դաշտ):


ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ.

Թվի՛ր այն դաշտերը, ուր կարող է գնալ b7-ի սև նավակը:



Փիղը քայլում է անկյունագծերով և մեկ քայլով կարող է տվյալ անկյունագծի ցանկացած դաշտը տեղափոխվել:

7



Օրինակ՝ դ.7-ում d4-ի սպիտակ փիղը կարող է a1-h8 և g1-a7 անկյունագծերի ցանկացած դաշտը գնալ (ընդամենը՝ 13 դաշտ):

Սպիտակների մյուս փիղն իր տրամադրության տակ 7 դաշտ ունի. a2 դաշտը՝ a2-b1 անկյունագծով, և c2, d3, e4, f5, g6, h7 դաշտերը՝ b1-h7 անկյունագծով:

Վերադառնալով սկզբնական դիրքին (դ.5)՝ կտեսնենք, որ կողմերից յուրաքանչյուրի փղերից մեկը կարող է միայն սպիտակ, իսկ մյուսը՝ միայն սև դաշտերով քայլել: Սպիտակ դաշտերով քայլող փղերը կոչվում են *սպիտակադաշտ* (կամ *սպիտակաքայլ*), իսկ սև դաշտերով քայլողները՝ *սևադաշտ* (կամ *սևաքայլ*) *փղեր*:


ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ.

1. Ո՞ր դաշտերը կարող է գնալ սևերի սևադաշտ փիղը:
2. a4-e8 անկյունագծի ո՞ր դաշտերն են անհասանելի սևերի սպիտակադաշտ փղին:



Թագուհին. իդեպ, շատ երկրներում այս ֆիգուրը «Ֆերպ», «Ֆերյապ» կամ «Ֆարգին» (վելյիր) են անվանում (նշանակում է իմաստուն, խորհրդատու), քայլում է և՛ հորիզոնականներով, և՛ ուղղաձիգներով, և՛ անկյունագծերով, այսինքն՝ նրա քայլում նավակի և փղի գործողություններն են համատեղվում: Թագուհին մեկ քայլով կարող է այդ գծերի ցանկացած դաշտը գնալ:

8



Դ.8-ում կետերով նշված են այն դաշտերը, ուր կարող է գնալ e5-ում գտնվող սպիտակ թագուհին (ընդամենը՝ 27 դաշտ):


ԱՌԱՋԱԳՐԱՆՔ.

Ո՞ր դաշտերն են մատչելի սև թագուհուն:



Ձիու քայլը շատ յուրօրինակ է: Հիշում ես՝ նա ֆիգուրների և գինյուրների վրայով ցատկերու հատկությունը է օժտված:


9



Գ.9-ի d4 դաշտում գտնվող ձին կարող է կետերով նշված ցանկացած սպիտակ դաշտը ցատկել: Տեսնենք, թե ինչպե՛ս է նա այդ անում: Գիպրասից երևում է, որ ձին, գտնվելով սև դաշտում, նախ՝ ուղղաձիգով կամ հորիզոնականով, դեպի իր կանգնած դաշտի հարևան սպիտակ դաշտն է շարժվում, ապա, շարժման ուղղությունը չփոխելով, անկյունագծով հարևան՝ նույնպես սպիտակ դաշտն է անցնում: Հետևապես՝ ձին, ցատկելով, օրինակ, e4 դաշտի վրայով, կանգ կառնի b3 կամ b5 դաշտում, d5-ի վրայով՝ e6-ում կամ e6-ում, d3-ի վրայով՝ e2-ում կամ e2-ում, e4-ի վրայով՝ f3-ում կամ f5-ում: Ուրեմն՝ յուրաքանչյուր քայլով ձին փոխում է իր դաշտի գույնը:

Գ.10-ում սև ձին բոլոր կողմերից իր և մրցակցի բանակների խաղաքարերով է շրջապատված, սակայն դա նրան բնավ չի խանգարում՝ կետերով նշված ցանկացած դաշտը ցատկել:

10




ԱՌԱՋԱԳՐԱՆՔՆԵՐ.

1. Ո՞ր դաշտերը կարող է գնալ դ.10-ում գտնվող սպիտակ ձին:
2. Վերադարձի՛ր դ.4-ին. ի՞նչ կարգով են համարակալված դաշտերը:

Իմացի՛ր նաև, որ, որքան մոտ է ձին կենտրոնին, այնքան մեծանում է այն դաշտերի թիվը, ուր նա կարող է ցատկել: Մոտենալով խաղատախտակի եզրին՝ ձիու հնարավորությունները նվազում են, այսինքն՝ պակասում է նրան մատչելի դաշտերի թիվը: Գրանում համոզվի՛ր ինքդ:

11



ԱՌԱՋԱԳՐԱՆՔ.

Առանձին-առանձին նշի՛ր, թե ո՞ր դաշտերը կցատկի


դ. 11-ի ձիերից յուրաքանչյուրը:

Ձին օժտված է նաև խուսանավելու բացառիկ ունակությամբ: Նրա սպա հատկությունն է ընդգծում հետևյալ հայտնի խնդիրը. ձիով անցնել խաղատախտակի բոլոր դաշտերով՝ յուրաքանչյուրում հանգրվանելով միայն մեկ անգամ: Մաթեմատիկոսները հաշվել են, որ կարելի է ցույց տալ իրարից տարբեր երեսուն միլիոն այդպիսի ճանապարհ: Ահա՛ թե ինչպիսի վիթխարի հնարավորություններ ունի նույնիսկ շախմատաշին մեկ ֆիգուրը՝ տվյալ դեպքում ձին:



Արքան քայլում է իր կանգնած տեղից ընդամենը մեկ դաշտ՝ բոլոր ուղղություններով:

12



Գ. 12-ում կետերով նշված են այն դաշտերը, ուր կարող է գնալ արքաներից յուրաքանչյուրը: Ուշադրություն դարձրո՛ւ, որ եզրային գծերում արքայի շարժունակությունը նվազում է (5 դաշտ՝ 8-ի փոխարեն): Առավել նվազ են նրա հնարավորությունները անկյունային դաշտերում (ընդամենը՝ 3 դաշտ):

ԱՌԱՋԱԳԻՐԱՆԵՐ.

Գրի՛ր, թե ո՞ր դաշտերը կարող է գնալ արքաներից յուրաքանչյուրը գ. 12-ի ա-ում և բ-ում:




Ձինվորները. նույն բանալի վինվորներն

իրարից ոչնչով չեն տարբերվում: Եթե անհրաժեշտության կատանձնապես դրանցից որևէ մեկին, ապա նշում են ուղղաձիգի անվանումը կամ այն դաշտինը, որի վրա գտնվում է այդ վինվորը: Օրինակ՝ ասում են. **ե** վինվորը, **հ4**-ի վինվորը: Ձինվորներին անվանում են նաև այն ֆիգուրների անուններով, որոնք սկզբնական դիրքում տվյալ ուղղաձիգն են զբաղեցնում: Այսպես՝ **ժ** վինվորն անվանում են թագուհու, **ե**-ն՝ արքայական, **ա**-ն և **հ**-ը՝ նավակալին, **գ**-ն և **բ**-ը՝ փղի, **բ**-ն և **գ**-ն՝ ձիու վինվորներ: **ժ** և **ե** վինվորներն անվանվում են նաև կենտրոնական, իսկ **ա**-ն և **հ**-ը՝ եզրային վինվորներ:

Ի տարբերություն ֆիգուրների, որոնք քայլում են բոլոր ուղղություններով՝ և՛ առաջ, և՛ ետ, վինվորները կարող են քայլել միայն առաջ՝ ուղղաձիգով մեկ դաշտ: Սակայն սկզբնական դիրքից, այն է՝ երկրորդ (սպիտակներ) և յոթերորդ (սևեր) հորիզոնականից, նրանք նաև իրավունք ունեն միանգամից երկու դաշտ տեղաշարժվելու:

Դիագրամներում սպիտակ վինվորները քայլում են դեպի վեր, իսկ սևերը՝ դեպի վար:

13



Գ. 13-ի դիրքում սպիտակների եզրային վինվորը մեկ քայլով կարող է ինչպես **ա3**, այնպես էլ՝ **ա4** դաշտը տեղաշարժվել, **ե3** վինվորը կարող է միայն **ե4**, իսկ կենտրոնականը՝ միայն **ե5** դաշտը գնալ:

ԱՄԱՋԱԿՐԱՆՔ.


Ո՞ր դաշտերը կարող է գնալ դ.13-ի սև գինավորներից յուրաքանչյուրը:

ՎԵՐՑՆԵԼՐ.

Վերհիշենք, թե ի՞նչ է կատարվում պատերազմի դաշտում: Հավասակորդները հարձակվում են, կրակում միմյանց վրա. որպես հետևանք՝ երկու կողմերն էլ կորուստներ են կրում: Մուտավորապես նույնը շախմատի խաղատախտակի վրա է կատարվում: Եթե, օրինակ, քայլող ֆիգուրի ճանապարհին հանդիպում է հավասակորդի ֆիգուրը (գինավորը), ապա այն կարելի է ոչնչացնել՝ *վերցնել*: Տևանք, թե ինչպե՞ս է դա իրականացվում:

Նախ՝ խաղատախտակից հեռացնում ենք այն ֆիգուրը (գինավորը), որը նախապես որոշել ենք վերցնել: Այնուհետև՝ վերջինիս գրավեցրած դաշտն ենք փոխադրում սևփական այն ֆիգուրը (գինավորը), որով մտադրվել ենք կատարել վերցնելու գործողությունը: Մասնով իսկ մեր խաղարարի քայլը համարվում է ավարտված: Վերցնելուց հետո, նույն քայլով, ֆիգուրն այլևս չի կարող իր ճանապարհը շարունակել: Բոլոր ֆիգուրները վերցնում են այնպես, ինչպես և քայլում են, այսինքն՝ իրենց քայլի ուղղությամբ:


14



Վերքը՝ նախքան վերցնելը

Գ.14-ում քայլի հերթը սպիտակներինն է: Նրանց թագուհին կարող է վերցնել սևերի նախակը, և այդ դեպքում կատայվի դ.15-ի դիրքը:

15



Վերքը՝ վերցնելուց հետո

Ընդգծենք, որ *վերցնելը պարտադիր չէ* (ինչպես շաշկու խմբի խաղերում): Բիշ հետո կիսմանակը նաև, թե ինչպե՞ս են վերցնում գինավորները:

ԲԱՅՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ


Հավանաբար՝ դու կհարցնես, թե՞ ի՞նչ միտք ունի քայլերը գրանցելը: Գիտե՞ս, շախմատային նշագրող թյուներն անհրաժեշտ է, որպեսզի արդեն խաղացված պարտիաները վերականգնել կարողանանք: Մեզնք, գրանցում են ավելորդ գործ համարելով, ծուլանում են դա անել, ինչը սխալ կարծիք է: Եթե չլիներ գրանցումը, ապա մեզ չէր հասնի հանճարեղ շախմատիստների այն մեծ ժառանգությունը, որից սցիմ սովորում ենք: Հնարավոր չէր լինի շախմատային արվեստին ծանոթանալը: Կո նույնիսկ ի վիճակի չէիր լինի վերլուծելու թո՛ իսկ խաղացած պարտիաները և չէիր իմանա կատարածդ սխալները՝ մյուս անգամ չկրկնելու համար: Չէիր կարողանա գարմացնել բնկերներիդ թո սարած գեղեցիկ կադրանակներով:

Լաի՛ր, մտնչուկ, որոշ ժամանակ սնց դու կժամոթանաս

այս կինովորաց խաղի բոլոր կանոններին և առաջին պարտիաները կխաղաւ: Գրի ս'ն գրանք: Կանյնի որոշ ժամանակ, և սեփական սչքերով կանսնեւ ու կհասկանաւ, թե որքա՞ն ևս աճել ու հասունացել:

Իսկե՛մ եղիք:

16



Եւ այսպես՝ դ.16-ում սպիտակներն իրենց հերթական քայլով ձին f3 դաշտից d4 են տեղափոխել՝ հարձակվելով սևերի e6 նավակի և e6 գինվորի վրա՝ նկատելով, որ պատասխան քայլով հնարավոր չէ, այդ երկուսն էլ միաժամանակ հեռացնել հարվածից: Լսել է խաղացված: Նման միաժամանակյա հարձակումը կոչվում է *կրկնակի հարված*, որին մենք հետագայում դեռ կրտսերաթանսնք: Սևերը, մտադրվելով a2 գինվորը վերցնել, նավակը հարձակումից a6 դաշտն են հեռացնում: Սպիտակներն իրենց հաջորդ քայլով վերցնում են e6 գինվորը: Այժմ, որպեսզի սևերը կարողանան իրենց մտահոսությունն իրականացնել, այն է՝ շահել a2 գինվորը, նախապես պետք է d6 ձին հակառակորդի նավակի հարձակումից հեռացնեն (ձին գինվորից շատ ավելի թանկ է): օրինակ՝ f5 դաշտը:

Իսկ այժմ, շախմատային նշագրությունից օգտվելով, հիշատակած բոլոր քայլերն ամրագրենք: Սպիտակների առաջին քայլը նշենք այսպես. 1. 2f3-d4: Ուրեմն՝ քայլը գրի ստանկիս նախ՝ պետք է նշել դրա հերթական համարը (1), սպա՝ ֆիգուրի կրճատ անվանումը (2) և այն դաշտը, որտեղից ֆիգուրն սկսում է քայլը (f3): Այնուհետև գծիկ է դրվում է (-), և գրանց-


վում այն դաշտի անվանումը, ուր նշված ֆիգուրն է տեղափոխվում (d4): Սպիտակների քայլն ու սևերի պատասխանը համարվում է մեկ *քիզ* քայլ և նույն համարի տակ է գրանցվում: Վերցնելու դեպքում, գծիկի փոխարեն, բաժանմուն նշան (-) է դրվում: Օրինակ՝ 2. 2d4:e6:

Այժմ փորձենք գրի ստանել մեր օրինակի բոլոր քայլերը.

1. 2f3-d4 նե6-a6 2. 2d4:e6 2d6-f5:

Եթե գրանցման ժամանակ ստեղծվեցություն է առաջանում սպիտակների կամ սևերի հերթական քայլը քայլ թողնելու, սպա այդ քայլի փոխարեն բազմակետ (...) է դրվում:

17




Օրինակ՝ դ.17-ում քայլի հերթը սևերինն է (մեկ հայտնի չէ, թե մինչ այդ ինչպե՞ն է խաղն ընթացել), և նրանք նավակով կրկնակի հարված են հասցնում՝ ֆիգուրը շահելով: Ասա՛ այդ քայլի գրանցման ձևը. 1. ... նե8-c3:

ԱՐՔԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.


ՇԱԽ

Մենք իմացանք, որ ֆիգուրներն իրենց շարժման ուղությունամբ կարող են հակառակորդի խաղադասքը վերցնել: Տեսեաքար՝ վստահ կարող ենք տանք, որ ֆիգուրը գրանում է, այն բոլոր դաշտերը, որոնցով քայլում է: Այսպես միակ ֆիգուրն է, որը չի կարող հակառակորդի օրն, խաղադասքի հարվածի տակ գտնվող դաշտը գնալ:



Գ.18-ում քայլի հերթը սպիտակներինն է: Ցանկություն դեպքում նրանք կարող են խաղալ 1. Փf4:e5 կամ 1. Աf5:e4, սակայն 1. Աf5:e5 քայլն այս դեպքում հնարավոր չէ, քանի որ արքան սև փղի հարվածի տակ գտնվող դաշտում կհայտնվի: Չի կարելի նաև 1. Աf5:f6 խաղալ, քանի որ հիմա էլ նա e4 ձիու հարվածի տակ կընկնի: Սպիտակ արքան անկարող է նաև g4, g5, g6 դաշտերը գնալ, որովհետև դրանք բոլորն էլ սև ֆիգուրների հարվածի տակ են:


Արքայի մյուս առանձնահատկությունն այն է, որ, հարձակման ենթարկվելով, նա անհապաղ պաշտպանության անհրաժեշտություն է պահում: Երբ ֆիգուրը կամ պինվորը գրոհում է հակառակորդի արքային, ընդունված է սաել, որ տվյալ ֆիգուրը (պինվորը) վերջինիս շախ է հայտարարում (շախ՝ արաբերեն արքա է նշանակում): Նշագրության մեջ շախը գումարման նշանի (+) տեսքով է պատկերվում:



Գ.19-ում վերջին քայլով ձին սևերի արքային ու թագուհուն կրկնակի հարված է հասցրել: Խաղի կանոններին համաձայն, երբ արքան հարձակման է ենթարկվում, նրան անհապաղ պետք է հեռացնել հարձակումից կամ, ինչպես ասում են, շախից: Որքան էլ թանկ է թագուհին, սևերը հարկադրված են նրա պաշտպանությունն արքայի փրկությունը գտնել. 1. ... Աf5-e5 2. Չd4:e6+ (նորից կրկնակի հարված, և նորից սև արքան պետք է շախից պաշտպանվի) 2. ... Աe5-d6 3. Չc6:d8:

Այս օրինակից կարող ենք եզրակացնել, որ շախին պատասխան քայլի ընտրությունը խիստ սահմանափակվում է:

Գոյություն ունի շախից պաշտպանվելու երեք միջոց (դ.20).




ա) վերցնել այն ֆիգուրը (պինվորը), որը շախ է հայտարարել՝ 1. ... Նc8:d8

բ) արքան հեռացնել շախից, այսինքն՝ արքան այնպիսի դաշտ տեղափոխել, որն այդ պահին հակառակորդի ո՛չ մի ֆիգուրի (պինվորի) հարվածի տակ չէ՝ 1 ... Աg8-h7

գ) բողարկվել (ծածկվել) շախից, այսինքն՝ արքայի և շախ հայտարարած ֆիգուրի միջև որևէ ֆիգուր (պինվոր) տեղադրել՝ 1. ... Նe2-e8:

Սակայն, եթե շախ է հայտարարել ձին կամ պինվորը, ապա վերջին միջոցը (բողարկվելը) հնարավոր չէ:

21



Տե՛ս. դ. 21-ում սպիտակների ձիով շախևն հայտարարել: Սևերն ու նեն պաշտպանվելու միայն երկու միջոց.


ա) արքան շախից հեռացնել՝ 1. ... Աց8-հ8

բ) ձին վերցնել՝ 1. ... Փժ8:ֆ6:

Քանի որ արքան մրցակցի ուժերի գրոհած ցանկացած դաշտը տեղադրել կամ թողնել շախի տակ, ըստ խաղի կանոնների, արգելվում է, ուրեմն՝ արքան միակ ֆիգուրն է, որն անհնար է վերցնել: Խաղի ընթացքում կարող են «շախշախվել» բոլոր ֆիգուրներն ու գինավորները, սակայն արքաները կմնան խաղատախտակին մինչև սովորոք:

Արքան միակ ֆիգուրն է, որն ակույտն արքային շախ հայտարարել չի կարող (դ. 22):


22



Անթույլատրելի դիրքեր


Արքաներին միշտ պետք է առնվազն մեկ դաշտ բաժանի (դ. 23):

23



Ռույլատրելի դիրքեր

24



ԱՌԱՋԱԳՐԱՆՔ.

Գ. 24. Գտի՛ր և գրանցի՛ր բոլոր հնարավոր քայլերը, որոնց միջոցով սպիտակները կարող են շախից պաշտպանվել:

Մ Ա Տ


Մինչ այժմ մենք այնպիսի դիրքեր էինք ուսումնասիրում, որոնցում հայտարարված շախից պաշպանություն կա՛ր: Մաս է կոչվում այն շախը, որից պաշտպանվելու ելք չկա:

Եթե կողմերից մեկին հաջողվում է խաղատախտակին նման դիրք ստեղծել, այսինքն՝ հակառակորդի արքային մատ

հայտարարել, ապա խաղը նշված կողմի հաղթանակով է ավարտվում: Նշագրության մեջ մատը բազմապատկման նշանի (x) տեսքով է պատկերվում:




Գ.25-ում, սեփական արքայի պաշտպանության ներքո, թագուհով մատ է պատկերված: Սև արքան չի կարող վերցնել թագուհին, որը շախ է հայտարարել, քանի որ իր սպիտակ ավտյանի հարվածի տակ կհայտնվի: Մինևույն ժամանակ՝ թագուհին, d7 դաշտում գտնվելով, սև արքայի հնարավոր՝ փախուստի բոլոր դաշտերն է խլում (c7, c8, e7, e8):



Գ.26-ում սևերը վերջին հորիզոնականով մատ են ստացել: Նրանք ի վիճակի չեն նավակը վերցնել կամ դրա հասցրած «մահացու» շախից քողարկվել, իսկ արքան հեռացնելուն ի՞ր իսկ վինվորներն են խանգարում: Եթե սև արքան f8 դաշտում գտնվեր կամ f7, g7, h7 վինվորներից որևէ մեկը շիններ, ապա սևերը մատից կխուսափեին: Նման դեպքերում շախմատիստներն ասում են, որ արքան պուրկ էր «օղանցքի»:

27



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ.

Գ.27. Հակառակորդ արքային մեկ քայլից մատ հայտարարի՞ր՝

- ա) սպիտակների քայլի դեպքում
- բ) սևերի քայլի դեպքում:


Գիտե՞ս. շատ դեպքերում խաղը մինչև մատը չի շարունակվում. մրցակիցներից մեկը, համոզվելով, որ իր՝ համար ի վերջո այն անխուսափելի է, և հետագա պայքարը՝ անօգուտ, հանձնվում է՝ պարտությունն ընդունելով:

**ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ՓՈԽԱՐԿՈՒՄ**

Մենք իմացանք, որ վինվորը կարող է միայն ի՞ր իսկ գրադեպրած ուղղաձիգով շարժվել, այն էլ (ի տարբերություն ֆիգուրների)՝ միայն առաջ:


Զինվորի մյուս առանձնահատկությունն այն է, որ նա վերցնում է հակառակորդի խաղաքարը կամ շախ հայտարարում ո՛չ իր քայլի ուղղությամբ: Իր շարժման ուղղությամբ նա անկյան տակ գրոհում է այն երկու դաշտերը, որոնք իրենից անմիջապես աջ ու ձախ կողմերում բնկած ուղղաձիգների վրա են գտնվում:

28



Գ.28-ում կետերով նշված են այն դաշտերը, որոնք գրոհված են սպիտակ կամ սև գինավորներով:

29




Գ.29ա-ում սևերի ձին և փիղը սպիտակների գինավորի հարվածի տակ են գտնվում: Սպիտակները, իրենց քայլի դեպքում, կարող են ինչպես փիղը, այնպես էլ՝ ձին վերցնել: Փիղը վերցնելու դեպքում դիրքը խաղատարտակի վրա կրնդունի Գ.29բ-ի տեսքը: Այդ քայլը կգրանցվի՝ 1. e4:d5: Չինվորով քայլ կատարելիս կամ վերցնելիս՝ կրճատ «գ» չի գրանցվում:

Եթե սպիտակները փղի փոխարեն նախընտրեն վերցնել ձին (Գ.29գ), ապա այդ քայլով գինավորը սև արքային շախ կհայտարարեն (գրանցվում է՝ 1. e4:b5+), և սևերը պարտավոր կլինեն շախի պաշտպանվել (օրինակ՝ 1. ... Աa6-b6):

Չինվորը ունի երեք առանձնահատկություն: Նա կարող է վերցնել հակասակորդի գինավորը (քայլ ո՛չ՝ ֆիգուրը), այսպես կոչված, *կողանցիկ*: Տեսնենք, թե ինչպես է դա իրականացվում:


30ա



Գիրքը՝ կողանցիկ վերցնելուց ստաց

Գ.30ա-ի դիրքը ստացվել է 1. e2-e4 e7-e6 2. d2-d4 d7-d5 3. e4-e5 f7-f5 քայլերից հետո:

30բ



Գիրքը՝ կողանցիկ վերցնելուց հետո


Այժմ սպիտակները, եթե կամենան, կարող են կողանցիկ վերցնել սևերի Է գինավորը իրենց Է գինավորով՝ վերջինս f6 դաշտում տեղադրելով (Գ.30բ): Գրանցվում է՝ 4. e5:f6: Այսպիսի դիրք կարող էր ստացվել նաև այն դեպքում, եթե սևերն իրենց նրբորդ քայլով ոչ թե 3. ... f7-f5, այլ՝ 3. ... f7-f6 խաղալին:

Ուրեմն, երբ վինվորներից որևէ մեկը, իր սկզբնական դիրքից երկու դաշտ առաջանալով, հակառակորդի վինվորի կողքին է հայտնվում, վերջինս կարող է նրան կողանցիկ վերցնել՝ տեղափոխվելով այն դաշտը, որի վրայով անցել էր տրված վինվորը:

Հեշտ է կտահել, որ կողանցիկ վերցնել կտրող են միայն այն սպիտակ վինվորները, որոնք գտնվում են 5-րդ հորիզոնականում, և այն սև վինվորները, որոնք կանգնած են 4-րդ հորիզոնականում:

Կողանցիկ վերցնել կտրելի է միայն անմիջապես հաջորդող քայլով: Եթե սպիտակները 4. e5:f6 քայլի փոխարեն ցանկացած այլ քայլ կատարեն, ապա հետագայում f5 վինվորը կողանցիկ վերցնելու իրավունքը կկորցնեն:

31



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ.

Դ.31. Հետևյալ ո՞ր քայլերից հետո է հնարավոր կողանցիկ վերցնելը.

ա) 1. Nc2-c4+, 1. g2-g4

բ) 1. ... 2d7-e5, 1. ... 0d8-g5+, 1. ... a4-a3, 1. ... e7-e5:

Եվ վերջապես, վերջին հորիզոնականը (8-րդ՝ սպիտակները և 1-ին՝ սևերը) հասնելով, հենց այդ քայլով վինվորը փոխարինվում է նույն գույնի թագուհով, նավակով, փղով կամ ձիով (խաղացողի հայեցողությամբ), քայց ո՛չ՝ արքայով (անկախ նրանից, թե՛ խաղատախտակի վրա կա՞ն այդպիսի


Ֆիգուրներ, թե՛ ոչ): Նման փոխարինումը (վինվորը՝ ֆիգուրով) կոչվում է *փոխարկում*, իսկ տվյալ ուղղաձիգի այն վերջին դաշտը, որտեղ կատարվում է փոխարկումը՝ *փոխարկման դաշտ*:

Ուրեմն՝ խաղի ընթացքում մրցակիցներից յուրաքանչյուրը կարող է ունենալ սովել թվով ֆիգուրներ, քան՝ ունեցել է սկզբնական դիրքում. օրինակ՝ մինչև ինը թագուհի, մինչև տասը նավակ, փիղ կամ ձի:

Ամենից հաճախ վինվորը փոխարկվում է ուժեղագույն ֆիգուրի՝ թագուհու: Այստեղից էլ առաջացել է «վինվորը գնում է թագուհի» դարձվածքը:

Երբ վինվորը վերջին հորիզոնականն է հասնում, քայլը սովորականի պես գրանցելուց հետո գրվում է նաև փոխարկված ֆիգուրի կրճատ անվանումը:

32




Դ.32-ում 1. e7-e8f+ նշանակում է, որ սպիտակներն իրենց e7 վինվորը առաջ են մղել e8 դաշտը և փոխարկել թագուհու, վերջինս էլ, իր հերթին, սևերի արքային շախ է հայտարարել: Նշված վինվորը կարող էր թագուհու փոխարկվել՝ նաև վերցնելով d8 դաշտի ձին՝ 1. e7:d8f: Սպիտակներն իրենց վինվորը կարող էին և ցանկացած այլ ֆիգուրի փոխարկել: Այս օրինակում նպատակահարմար կլինեք վերցնել ձին և վինվորը ձիու փոխարկել, որն էլ անմիջապես հակառակորդի արքային և թագուհուն կրկնակի հարված կհասցնեք: Այդ քայլը կգրանցվեր՝ 1. e7:d82+:

ՓՈՒՍԱՏԵՂՈՒՄ

Խաղի ընթացքում կողմերից յուրաքանչյուրին մեկ անգամ իրավունք է վերապահվում քայլ կատարելու միանգամից երկու ֆիգուրով՝ արքայով և նավակով: Դա մեկ քայլ է համարվում և կոչվում է *փոխատեղում*: Այն կատարվում է այսպես. արքան հորիզոնականով երկու դաշտ շարժվում է նավակի ուղղությամբ, որից հետո նավակը, արքային շրջանցելով, նրա կողքի դաշտում է կանգնում: Փոխատեղումը դեպի արքայական թև կոչվում է *կարճ*, իսկ դեպի թագուհու թև՝ *երկար*. Բանն այն է, որ թագուհու թևում նավակն ավելի երկար ճանապարհ է անցնում, քան՝ արքայականում (3 դաշտ՝ 2-ի փոխարեն):

33



Դ.33-ում սպիտակները կատարել են կարճ, իսկ սևերը՝ երկար փոխատեղում:

Փոխատեղումն արգելվում է հետևյալ դեպքերում.

ա) եթե արքան կամ նավակը մինչ այդ քայլ են կատարել (նույնիսկ, եթե հետագայում իրենց նախնական դիրքերն են վերադարձել)

բ) եթե տվյալ պահին արքային շախ է հայտարարված


գ) եթե դաշտը, որը փոխատեղումից հետո կգրավի արքան, հարվածի տակ է

դ) եթե դաշտը, որի վրայով անցնում է արքան, գրոհված

է հակառակորդի կողմից

ե) եթե արքայի և նավակի միջև ֆիգուրներ են գտնվում:

34




Դ.34-ում սպիտակները կարող են միայն կարճ, իսկ սևերը՝ միայն երկար փոխատեղում կատարել:

Փոխատեղումը արքան անվտանգ թաքստոց տեղափոխելու և նավակն արագ խաղի մեջ մտցնելու հնարավորություն է ընձեռում: Դա շատ կարևոր է ուժերը համախմբելու համար:

Նշագրությունը. կարճ փոխատեղում՝ 0:0, երկար փոխատեղում՝ 0-0-0:

35




ԱՌԱՋԱԳՐԱՆԲ.

Կողմերից յուրաքանչյուրի համար ո՞ր թևում է հնարավոր փոխատեղումը դ.35-ում:

Եթե կողմերից մեկի քայլի ղեկարում նրան պատկանող բոլոր ֆիգուրներն ու զինվորները գրկված են քայլ կատարելու հնարավորությունից, սակայն արքային շախ չի հայտարարված, այլ կերպ սառած՝ այդ բանակն ամբողջովին կաթվածահար է, սպա խաղատախտակի վրա *պատույին* վիճակ (դիրք) է: Խաղը, որի ընթացքում այդպիսի վիճակ է ստեղծվում, համարվում է ոչ-որի սվարտված:

36



Գ.36-ում սպիտակներն իրենց քայլի ղեկարում կշարունակեն՝ 1. Նe8:f8x: Սակայն քայլի հերթը սևերինն է, և նրանց արքան, փիղն ու զինվորները գրկված են քայլելու հնարավորությունից: Ընթանն՝ խաղատախտակի վրա պատույին դիրք է, և սպիտակները պետք է հաշտվեն ոչ-որի արդյունքի հետ:


Այսպիսով՝ պատույին վիճակը պարտվող կողմին խաղը փրկելու հնարավորություն է ընձևում:

Գ.37-ում սևերը նյութական մեծ առավելություն ունեն և իրենց քայլի ղեկարում, շարունակելով 1 ... f6-e6+, շուտով սպիտակ արքային մատ կհայտարարեն:

Մինչդեռ, սպիտակների քայլի ղեկարում, նրանք կարող են խաղը փրկել՝ գոհարելով փիղը և ձին.

1. Փa5-d2+ ...

37



Այժմ սևերը պարտավոր են գոհարելու թյունն ընդունել, այնպես կկորցնեն թագուհին՝ հաղթանակի միակ հույսը .
1. ... f6-e6+ 2. Չg1-f3+ ...

Եվս մեկ գոհարելու թյունն ու կրկնակի հարված, և նորից պետք է թագուհին փրկել:


2. ... Չh4-f3

Բաց այժմ խաղատախտակի վրա պատույին դիրք է, և այնուամենայնիվ՝ խաղը ոչ-որի է սվարտվում:


ԱՌԱՏԱԳՐԱՆՔՆԵՐ.

Գ.դ.38-ում, 39-ում և 40-ում պատ հարկադրի՝ր: Երկր դիրքում էլ քայլը սևերինն է:


38



39



40



**ՈՉ-ՈՐԻՒ ԱՅԼ ՏԵՍԱԿՆԵՐ,
ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՇԱՍ**

Խաղը համարվում է ոչ-որի ավարտված, նաև երբ.

ա) կողմերից ոչ մեկը մատ հայտարարելու համար բավարար ուժեր չունի: Օրինակ՝ հակառակորդներից մեկն ունի միայն արքա, իսկ մյուսը՝ կամ միայն արքա, կամ էլ՝ արքան փոյի կամ ձիու հետ, և կամ երկուսին էլ մնացել են միայն արքաները՝ մեկական փոյի հետ, վերջիններս էլ, իրենց հերթին, նույն գույնի դաշտերով են քայլում (միագույն են)


բ) վերջին հիսուն քայլի ընթացքում խաղատախտակից ոչինչ չի վերցվել և պինվորով քայլ չի կատարվել: Այստեղ մրրցակիցներից մեկի պահանջով պարտիան ոչ-որի է ճանաչվում (50 քայլի

կանոն): Հարկ է նշել, որ բացառություն են հետևյալ դեպքերը, երբ նշված կանոնը երկարաձգվում է մինչև 75 քայլ.

- 1) արքան, նավակն ու փիղը՝ արքայի և նավակի դեմ
- 2) արքան և երկու ձին՝ արքայի և պինվորի դեմ
- 3) արքան, թագուհին և պինվորը (երբ այդ պինվորը նախավերջին հորիզոնականում է)՝ արքայի և թագուհու դեմ
- 4) արքան և թագուհին՝ արքայի և երկու փոյի դեմ
- 5) արքան և թագուհին՝ արքայի և երկու ձիու դեմ
- 6) արքան և երկու փիղը՝ արքայի և ձիու դեմ
- գ) նույն դիրքը խաղատախտակի վրա կրկնվում է երեք կամ ավելի անգամ (ընդ որում՝ դիրքը կրկնելիս քայլի հերթը նույն կողմինն է):

Առավել հաճախ՝ դիրքի կրկնությունը *հավերժական շախի* պատճառով է առաջանում: Հավերժական է կոչվում այն շախը, երբ կողմերից մեկը մրցակցի արքային մեկը մյուսին հաջորդող շախեր է հայտարարում, որոնցից վերջինս խուսափել չի կարողանում:


41



Գ.41-ում սևերն իրենց վերջին քայլով շախ են հայտարարել՝ 1. ... Թ-h5-g4+, և այդ ձևով խուսափել սպառնացող Թ-a6-b7x-ից: Ապա հետևում է. 2. Աg1-h1 Թ-g4-f3+ 3. Աh1-g1 Թ-f3-g4+ (դիրքը երկրորդ անգամ կրկնվեց) 4. Աg1-h1 Թ-g4-f3+ 5. Ա h1-g1:

Սևերով խաղացողն այժմ, իր հերթական քայլը գրանցելով, քայլ չկատարելով, կարող է ոչ-որի պահանջել՝ հայտնելով կատարելիք քայլը՝ 5. ... Թ-f3-g4+, որից հետո դիրքը կրկնվի:

42



Գ.42-ում սպիտակները նավակով հավերժական շախ են հայտարարում՝ անընդհատ գրոհելով սև արքային a7 և a8 դաշտերից: Այստեղ, նախորդ (գ.41) դիրքի հետ համեմատած, արքան շատ ավելի մեծ թվով դաշտեր է տնօրինում, բայց շախերից խուսափել, այնուամենայնիվ, նրան չի հաջողվում:

Գործնականում, համոզվելով, որ հավերժական շախից պաշտպանություն չկա, կողմերը փոխադարձ համաձայնությամբ խաղն ավարտում են ոչ-ոքի: Հավերժական շախը, ինչպես և պատը, պաշտպանվող կողմին փրկություն հնարավորություն է ընձեռում: Հետևաբար՝ և՛ պատը, և՛ հավերժական շախը պաշտպանության միջոցներ են:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Տեղ խնայելու նպատակով՝ ծանոթագրություն մեջ օգտագործվում են հետևյալ պայմանական նշանները.

- ! լավ քայլ
- !! շատ ուժեղ քայլ
- ? թույլ, վատ քայլ
- ?? կոպիտ սխալ
- !?! ուշադրության արժանի քայլ
- ?! կասկածելի քայլ
- ~ ցանկացած քայլ

- = հավաաար դիրք
- + սպիտակների դիրքը փոքր-ինչ գերադասելի է
- = սևերի դիրքը փոքր-ինչ գերադասելի է
- + սպիտակները հստակ առավելություն ունեն
- + սևերը հստակ առավելություն ունեն:

**ԿԱՐՃ ՆՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ,
ԳԻՐՔԵՐԻ ԱՄՐԱԳՐՈՒՄ**

Քայլերի գրանցման մինչ այժմ ներկայացված ձևը կոչվում է *լրիվ նշագրություն*: Գոյություն ունի նաև՝ *կարճը*: Այս դեպքում դաշտը, որտեղից խաղադարն սկսում է քայլը, բաց է թողնվում: Նշվում է միայն դաշտը, ուր տեղափոխվում է սղո խաղաքարը: Օրինակ՝ 1. 2g1-f3 քայլը կարճ նշագրությամբ կգրանցվի 1. 2f3:

Եթե վերցնում է գինվորը, ապա գրի է առնվում միայն, թե ո՞ր ուղղաձիգից ո՞րն է նա տեղափոխվել: Օրինակ՝ 10. e4:d5 քայլը կգրանցվի՝ 10. ed: Վերցնելու նշանը նույնպես բաց է թողնվում:

Այն դեպքերում, երբ մինևույն դաշտը կարող են երկու նույնանուն ֆիգուրներ (օրինակ՝ նույն կողմին պատկանող երկու ձիեր) գնալ, քայլը գրանցելիս օժանդակ նշան է մտցրվում: Օրինակ՝ 12. Nhe1 նշանակում է, որ 12-րդ քայլով երկու սպիտակ նավակներից, որոնք կարող էին e1 դաշտը գրավել, այնտեղ հենց հ1 դաշտի՞նն է գնացել: Ճշտելու նպատակով օգտագործվում է նաև հորիզոնականի համարը: Օրինակ՝ եթե սպիտակ ձիերը e2 և e4 դաշտերն են գրավել, ապա, 23. 2e4-g3-ի փոխարեն, կարճ նշագրությամբ պետք է գրել՝ 23. 24g3:

Հետագայում մենք լրիվ նշագրությամբ գրելու ձևը կօգտագործենք՝ հիմնական քայլերը գրանցելիս, իսկ կարճը՝ ծանոթագրության դեպքում:

Մինչ այժմ մենք քայլերը տողի երկայնքով էինք գրան-

յում: Օգտագործվում է նաև սյունակով գրելու ձևը:

Ահա՛ պաշտոնական մրցաշարերում խաղացված ամենա-
կարճ պարտիաներից մեկի գրանցման օրինակը.

ՄՊԻՏԱԿՆԵՐ ՍԵՎԵՐ

Ժիրո - Լազար
Փարիզ 1924 թ.

- 1. d2 - d4 Չg8 - f6
- 2. Չb1 - d2 e7 - e5
- 3. e4 : e5 Չf6 - g4
- 4. h2 - h3? ...

Սպիտակներն շտապում են՝ ցանկանալով որքան հնարավոր է շուտ «վնդել» իրենց ճամբարին մոտեցած ձին: Մինչդեռ ոչ մի վտանգ չէր սպառնում: Կարելի էր, օրինակ, 4. Չgf3 խաղալ, և 4. ... Փc5 5. e3 Չc6 6. Չc4 b5 7. Չd2 a6 8. a4-ից հետո սպիտակները լավ դիրք կունենային:

4. ... Չg4 - e3!

Սպիտակներն ընդունեցին իրենց պարտությունը. թագուհու կորուստն անխուսափելի էր, քանի որ 5. fe-ին կհետևեր 5. ... Թh4+ 6. g3 Թ:g3x:

Հիմա այս նույն պարտիան, համեմատության համար, եկ կարճ նշագրությամբ գրանցենք:

Ժիրո-Լազար (Փարիզ, 1924 թ).

1. d4 Չf6 2. Չd2 e5 3. de Չg4 4. h3? Չe3!, սպիտակները հարձակվեցին:

Շախմատային նշագրությունը հնարավորություն է ընձեռում՝ նաև դիրքերն ամրագրելու: Այդ նպատակով նախ՝ գրանցվում է արքայի, ապա՝ թագուհու, նավակների, փղերի, ձիերի և վիսկոյների պատկերած դաշտերը խաղատախտակի վրա:

Որպես օրինակ՝ եկ սկզբնական դիրքը գրանցենք (դ.5).


Սպիտակներ՝ Աe1, Թd1, Նa1, Նh1, Փc1, Փf1, Չb1, Չg1, պ. a2, b2, c2, d2, e2, f2, g2, h2, (16):

Սևեր՝ Աe8, Թd8, Նa8, Նh8, Փc8, Փf8, Չb8, Չg8, պ. a7, b7, c7, d7, e7, f7, g7, h7 (16):

Ուշադրություն դարձրո՛ւ, որ գրանցումը թագուհու թևից

դեպի արքայականն է կատարվում. այսպես՝ նախ՝ գրի է առնվում սպիտակների սևադաշտ (c1), ապա՝ սպիտակադաշտ (f1) փղի գրաված դիրքը, սկզբում գրանցվում է a2, վերջում՝ h2 վիսկոյրը: Փակագծերում թվերով նշվում է տվյալ կողմին պատկանող ֆիգուրների և վիսկոյրների ընդհանուր քանակը:

43



Քայլը սևերինն է

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ.

- 1. Գրի ա՛ն դ.43-ի դիրքը:
- 2. Գտի՛ր, թե՛ ինչպե՛ս սևերին մեկ քայլից մատ հայտարարել: Կարճ նշագրությամբ գրանցի՛ր այդ քայլը:

ՖԻԳՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Խաղը վարելու և դրա ընթացքում փոխանակություններ կատարելու համար եկ պարզենք, թե՛ ինչպիսի՞ն է յուրաքանչյուր ֆիգուրի և վիսկոյրի արժեքը:

Ուսման ընթացքում դու կհիմանաս, որ, ցանկացած երկու մեծություններ համեմատելիս, անհրաժեշտ է *չափման միավոր* ունենալ: Օրինակ՝ երկարությունը չափելու համար որպես այդպիսին կարող են ծառայել մեկ սանտիմետրը (1սմ), մեկ մետրը (1մ), մեկ կիլոմետրը (1կմ)՝ նայած, թե ի՞նչ երկարության առարկաներ ենք չափում: Այսպես՝ մատիտի և գրչի երկարությունները համեմատելիս հարմար է չափման միավոր ընդունել 1 սանտիմետրը: Ընդունենք՝ գրչի երկարությ-

յունն 1, 10 սմ, իսկ մատիտինը՝ 15 սմ: Հետևաբար՝ զրիչը մատիտից կարճ է 5 սանտիմետրով: Մեծ հեռավորություններ չստիկիս՝ չստիման միավոր կարող է ծառայել 1 կիլոմետրը: Այսպես՝ Երևանից Արտաշատ հեռավորությունը 30 կմ է, իսկ Երևանից Սևան՝ 54 կմ: Ուրեմն՝ Երևանից Սևան հեռավորությունը 24 կիլոմետրով ավելի է, քան՝ Երևանից Արտաշատ: Մեր օրինակում մի դեպքում չստիման միավոր բնյունեցինք 1 սանտիմետրը, մյուսում՝ 1 կիլոմետրը: Իսկ շախմատում չստիման միավորը մեկ գինավորի արժեքն է, քանի որ վերջինս գործում ամենաթույնն է:

Մի պահ առաջ անցնելով՝ ասենք, որ, այնուամենայնիվ, գինավորին թերազնահատելը սխալ է: Երբ խաղի վերջում խաղատախտակին քիչ ֆիգուրներ են մնում, հաղթում է այն կողմը, որը կկարողանա գինավորը թաքուհու փոխարկել:

Չին հավասարազոր է փղին, և դրանց արժեքը 3-ավան միավոր է: Այսինքն՝ ձին կամ փիղն իրենց հնարավորություններով (ուժով) հավասարազոր են երեք գինավորի:

$$\text{Չին} = \text{Փիղ} = \text{Գինավոր} + \text{Գինավոր} + \text{Գինավոր}$$

Փղերն ու ձիերն անվանում են *թեթի ֆիգուրներ*, չէ՞ որ դրանք առաջինն են մարտի նետվում:

Նավակի արժեքը 5 միավոր է, դա հավասար է թեթի ֆիգուրի և երկու գինավորի հավաքական ուժին:

$$\text{Նավակ} = \text{Գինավոր} + \text{Գինավոր} = \text{Չին} + \text{Գինավոր}$$

Թեթի ֆիգուրի փոխանակությունը նավակի հետ ստացել է հատուկ՝ *որակ շահել* (հավասարակողի համար՝ *որակ կորցնել*) անվանումը:

Նավակը թույլ է երկու թեթի ֆիգուրից:

$$\text{Նավակ} < \text{Գինավոր} + \text{Գինավոր} = \text{Գինավոր} + \text{Չին}$$

Երկու թեթի ֆիգուրը մոտավորապես հավասարակշռում են նավակին և երկու գինավորին:

$$\text{Գինավոր} + \text{Գինավոր} = \text{Գինավոր} + \text{Չին} + \text{Չին} \approx \text{Նավակ} + \text{Գինավոր} + \text{Գինավոր}$$

Թաքուհին շախմատային գործի ամենապորեղ ֆիգուրն

է՝ նրա արժեքը 9 միավոր է: Կարելի է ասել, որ սա մոտավորապես հավասար է երկու նավակի կամ նավակի, թեթի ֆիգուրի և մեկ գինավորի հավաքական ուժին:

$$\text{Թաքուհի} \approx \text{Նավակ} + \text{Նավակ} \approx \text{Նավակ} + \text{Գինավոր} + \text{Գինավոր} = \text{Նավակ} + \text{Չին} + \text{Գինավոր}$$

Իսկ սառ նավակը և երկու թեթի ֆիգուրը ուժեղ են թաքուհուց:

$$\text{Նավակ} + \text{Գինավոր} + \text{Գինավոր} = \text{Նավակ} + \text{Գինավոր} + \text{Չին} > \text{Թաքուհի}$$


Թաքուհին և նավակն անվանում են *ժանր ֆիգուրներ*, չէ՞ որ դրանք՝ ժանր հրետանու նման, օժտված են հուժկու և հետուսար հարվածներ հասցնելու ու նավաթյամբ:

Արքան շախմատային խաղի գլխավոր ֆիգուրն է: Նրա ճակատագրից է կախված հանդիպման ելքը: Արքայիցի արքային մաս հայտարարելու նպատակով կարելի է ցանկացած գոհարելու թյան (նազ: Խաղի սկզբում և միջնավազում արքան թույլ ֆիգուր է, և անընդհատ պաշտպանության կարիք ունի: Սակայն վերջնավազում, երբ հավասարակողի փոքրաթիվ ուժերի կողմից մատ ստանալու վտանգը վերանում է, նրա ուժն պայքարին մեծանում է՝ տատանվելով թեթի ֆիգուրի և նավակի միջև (3-5 միավոր):

Նշված գնահատականները տրվել են շախմատիստների շատ սերունդների փորձի արդյունքների հիման վրա: Սակայն դրանց վերապահորեն մոտեցի՛ր: Բանն այն է, որ ֆիգուրների և գինավորների արժեքները կարող են փոփոխվել՝ դիրքի ստանձնահատկություններից ելնելով:

Համոզվե՛նք դրանում:

44



Գ.44-ում սևերը նյութական մեծ առավելություն ունեն. նրանց թագուհին փղի դեմ է պայքարում: Սակայն սպիտակները չեն շտապում գնալ վայր դնել: Սև արքան անհաջող դիրք է գրադեցնում. սա էլ որոշում է նրա ձակատագիրը:

Արքան իր գրաված դաշտին է գամված, և սևերն ի վիճակի չեն 1. ... g4 քայլով նրան ճանապարհ քայել, քանի որ d8-ից մատ կստանան: Թագուհու հնարավորությունները նույնպես սահմանափակ են, քանի որ նա պարտավոր է g2 վիճակին հսկել (այլապես՝ սպիտակները g2-g3 քայլով մատ կհայտարարեն): Միաժամանակ՝ փղով e1 դաշտից «մահացու» շախ է սպառնում:

1. ... Թc2 - e2
2. Փa5 - c7! ...

Այժմ սպառնում է 3. Փg3x: Եթե սևերը 1. ... Թf2 նախընտրեն, ապա նորից 2. Փc7! կհետևեր, և սպիտակներն ավելի շուտ կհաղթեն:

2. ... Թe2 - f2
3. Փc7 - d6! ...

Սպասողական քայլ է (*սպասողական* են կոչվում այն քայլերը, որոնք քայլի հերթը կամավոր փոխելու նպատակով են կատարվում):

Սևերը *ցուզցվանգում* են (գերմաներեն «դեր ցուզ»՝ քայլ, «ցվանգ»՝ հարկադրած): Սա այն վիճակն է, երբ ցանկացած կատարած քայլ վատացնում է դիրքը՝ նյութական կամ դիրքային փոքրումների հանգեցնելով:

Իրոք, թագուհին չի կարող f2 դաշտը թողնել, քանի որ 4. Փg3x կամ 4. g3x կհետևի, իսկ 3. ... g4 այժմ էլ չի կարելի՝ 4. Փe7+ պատասխանի պատճառով (երևի կռահեցիր, որ 1. ... Թf2-ը նույն ցուզցվանգին մեկ քայլ ավելի շուտ կհանգեցնեն):

3. ... Թf2 - f4 +

Սևերն այլևս հաղթանակի մասին չեն մտածում: Նրանք հարկադրված են թագուհին փոխարինելու, որպեսզի 4. Փ:f4? gf քայլերից հետո խաղը գոնե ոչ-որի ավարտեն: Սակայն... նրանց նոր անակնկալ է սպասում.

4. g2 - g3+! Թf4:g3

5. Փd6 : g3x:

Այսպիսով՝ սև արքայի անհաջող դիրքի պատճառով թագուհին փղից թույլ գտնվեց: Սակայն այս օրինակը, իհարկե, բոլորովին էլ չի հերքում թիչ առաջ բերված՝ արժեքների գնահատման կանոնները կամ նվաստացնում դրանց կարևորությունը: Այնպես որ (իհարկե, խելամտորեն) օգտվի՛ր դրանցից:

Քայլ առ քայլ շախմատային գիտության գաղտնիքների մեջ խորանալով՝ ավելի հստակ կհասկանաս ու կգնահատես ստեղծված դիրքերը, կտեսնես դրանց առանձնահատկությունները, այնպիսի հիասքանչ ու բացառիկ լուծումներ կգրաս նես, ինչպիսին տեսանք հենց նոր դիտարկած օրինակում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԱՆՈՆՆԵՐ

Եթե մրցակիցներից մեկը, իր քայլի դեպքում, որևէ ֆիգուրի կամ վինվորի ձեռք տա (դիպչի), ապա պարտավոր է դրանով քայլ կատարել (ձեռք ես տվել՝ քայլ կատարի՛ր), իսկ եթե հակառակորդի որևէ խաղաքարին՝ ապա պարտավոր է այն վերցնել: Սակայն, եթե ձեռք տված ֆիգուրը քայլ կատարելու հնարավորություն չունի, իսկ հակառակորդի խաղաքարը վերցնելը նույնպես անհնար է, ապա վարժու՛նքն անհետևանք է մնում:

Եթե մրցակիցներից մեկը միանգամից և՛ սեփական, և՛ հակառակորդի ֆիգուրին կամ վինվորին դիպչի, ապա պարտավոր է վերցնել հակառակորդի խաղաքարն այն սեփական ֆիգուրով կամ վինվորով, որին և ձեռք էր տվել (իսկ եթե դա հնարավոր չէ՝ ապա ցանկացած այլ խաղաքարով): Եթե ձեռք տված ֆիգուրը կամ վինվորը վերցնելն ընդհանրապես հնարավոր չէ, ապա տվյալ մրցակիցը պարտավոր է քայլ կատարել այն սեփական խաղաքարով, որին և նախապես ձեռք էր տվել:

Եթե մրցակիցներից մեկը ցանկանում է ուղղել որևէ ֆիգուրի կամ վինվորի դիրքը վանդակում, ապա նախապես պետք է հակառակորդին պոռչացնի՝ «Ուղղում եմ» արտասանելով, և նոր միայն՝ ուղղի: Ուղղել կարելի է միմիայն մրցակցի ներկայությամբ, իսկ եթե վերջինս հեռացել է խաղատախտակի մոտից, ապա՝ խաղավարին տեղյակ պահելուց հետո:

Քայլը կատարված է, եթե խաղաքարը նոր դաշտ է տեղա-

փոխվել և տեղադրվել, և ձեռքը դրանից հեռացվել է: Կատարած քայլը փոխել չի թույլատրվում: Սակայն, բանի դեռ ձեռքը խաղաքարից կտրված չէ, դրանով կարելի է ցանկացած հնարավոր այլ դաշտ քայլ կատարել:

Ոչ-որիի բանակցու թյու նները սովորաբար սկսում են հերթական քայլը կատարելուց հետո: Մրցակիցը կարող է այն ընդունել, կարող է և մերժել՝ խոսքով կամ հերթական քայլը կատարելով: Մինչ այդ՝ ոչ-որի առաջարկողն իր առաջարկը ետ վերցնելու իրավունք չունի: Եթե ոչ-որիի առաջարկը մինչ քայլ կատարելն է արվել, ապա հակառակորդն իրավունք ունի պահանջելու, որ նախապես քայլ կատարվի, իսկ առաջարկու թյունը, այնուամենայնիվ, ուժի մեջ է մնում:

«Շախ» կամ «մա՛տ» բարձրաձայն արտասանելը պարտադիր չէ:

ՄԻ ԲԱՆԻ ԽՈՍՔ ՇԱՄԱՏԻՍԻ ՊԱՐԿԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խաղառախտակի առջև նստի՛ր քուսպ ու հանգիստ: Գրանով դու ոչ միայն չես խանգարի մրցակցիդ, այլև՝ ինքդ քեզ, բանւի ուշադրու թյան կենտրոնացումը նվազեցնում է հնարավոր սխաղների ու վրիպումների թիվը:


Մի՛ անհանգստացրու դիմացինիդ գանապան հարցերով ու խնդրանքներով, երբ քայլի հերթը նրանն է, և նա մտածում է:

Ֆիգուրը կամ ցինվորը տեղաշարժելիս՝ խաղառախտակին դրանով մի՛ հարվածիր. չէ որ քայլը չի ուժեղանա, այլ միայն՝ սովորող սղմուկ կառաջանա:


Լավ չէ՛ նայել հակառակորդի դեմքին, երբ նա մտածում է:

Պարտության դեպքում, որքան էլ այն ծանր լինի, համառակորդիդ շնորհավորի՛ր. ոտքի կանգնի՛ր և ձեռքը սեղմի՛ր: Ընդհանրապես՝ մրցակիցներն այդպես նամ սկսում են խաղը. միայն այն դեպքում ձեռքսեղմումը ողջուն է նշանակում: Այս սովորույթը հնուց է զարիս, երբ ասպետները կատաղի մենամարտից առաջ ողջունում էին միմյանց: Ի պատիվ շախմատիստների՝ նրանք պահպանել են այդ ավանդույթը...


**ՓՈՐՉՈՒՄ ԱՆՎԵՐԻ ԱՐԲԱՅԻՆ ԱՆԿ ԲԱՅԼԵՑ
ՄԱՏ ՀԱՅՏԱՐԱՐՍԵԼ
ԲԱՅԼԵՑ ԳԵՐՔԵՐՈՒՄ ԲԱՅԼԵՑ ԿՐԻՏԱԿԱՆԵՐԿԵԼ**




51




52




57




58




53




54




59




60




55




56




61




62




63




64




65




66



67



68



Միրելի՛ մանչուկ, խաղի կանոններին դու արդեն ծանոթ ես: Գուցե և փորձել ես մրցել պապիկիդ, հայրիկիդ, մայրիկիդ, ավագ եղբորդ կամ ընկերոջի հետ: Հնարավոր է՝ պարտվել ես: Մի՛ վիստվիր, այս գրքից դեռ շատ բան ունենալ սովորելու:

Գեհ, առաջ անցնենք...

ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ԽԱՂԻ ՓՈԽԵՐՈՒ

Շախմատային խաղը երեք փուլի է բաժանվում՝ սկզբնալստղ (դերյուտ), միջնալստղ (միջելշփիլ) և վերջնալստղ (էնդշփիլ):

Սկզբնալստղը պարտիայի սկզբնական մասն է (մոտավորապես 10-15 քայլ), երբ հակառակորդ բանավների ուժերի համախմբում կատարվում: Այս փուլում մատային սրղյուների հասնելը շատ դժվար է, այն էլ՝ միայն հակառակորդի թույլ տված կոպիտ սխալների հետևանքով: Ուժեղ շախմատիստների մենամարտերում դա հազվադեպ է պատահում:

Սկզբնալստղում ուժերը միավորելուց հետո խաղը հաջորդ փուլն է թևակոխում՝ *միջնալստղ*, որտեղ կողմերը ձգտում են միմյուց մատ հայտարարել կամ այնպիսի ակնհայտ նյոթ թախան առավելու թյան հասնել, որը հակառակորդին կրտիպի հանձնվել:

Սակայն ոչ բոլոր պարտիաներում է հաջողվում միջնալստղում մատ հայտարարելը կամ ճնշող նյոթ թախան առավելու թյան հասնելը: Նման դեպքերում փոխանակու թյունների հետևանքով ֆիգուրների և զինվորների քանակը նվազում է, և պարտիան վերջին փուլն է անցնում՝ *վերջնալստղ*: Այստեղ առաջնային խնդիրն է ոչ թե մատ հայտարարելը (հաճախ դա անհնար է՝ կողմերի բավարար ուժեր չունենալու պատճառով), այլ՝ զինվորի փոխարկումը թագուհու: Վերջնալստղը շախմատային խաղի ամենադժվարին և հետաքրքիր փուլն է, որը շախմատիստի քաղաքականին հմտություն է պահանջում:


Այժմ մի քանի պարպագույն վերջնախաղեր կրննարկենք, որոնցում *ուժեղ կողմը* ձգտում է մրցակցի միացնակ արքայի նկատմամբ իր նյա թական առավելությունն իրացնելու:

ՄԱՏ ՄԻԱՅՆԱԿ ԱՐՔԱՅԻՆ` ԾԱՆՐ ՖԻԳՈՒՐՆԵՐՈՎ

ա) Մատ թագուհով և նավակով

Ռագուհին և նավակը միացնակ արքային մատ են հայտարարում նույնիսկ առանց սեփական արքայի միջամտության: Այս դեպքում միայն խաղատախտակի եզրերում է մատային վիճակ առաջանում:


69



Գ.69-ում հենց այդպիսի բնորոշ դիրքեր են պատկերված: Բանի որ մատային վիճակը միայն խաղատախտակի եզրերում է ստացվում, ուստի նախապես պետք է որոշել, թե խաղատախտակի ո՞ր եզրում է միայնակ արքային մատ հայտարարվելու: Նպատակահարմար է արքային դեպի այն եզրը վանել, որին նա ավելի մոտ է կանգնած:

Ընդունենք՝ որոշել ենք արքային ստիպել 8-րդ հորիզոնականը նստահանջելու (դ.70): Այդ նպատակով՝ ծանր ֆիգուր

70



ներից մեկը (թագուհին կամ նավակը) պետք է նախ՝ արքայի փախուստի ճանապարհը կտրի.

1. Նg1-g4 Աե5-f5

Զրկվելով 4-րդ հորիզոնականը գնալու հնարավորությունից՝ արքան նավակի վրա է հարձակվում:

2. Աh1-h5! ...

Այս քայլով թագուհին միանգամից երկու խնդիր է լուծում՝ պաշտպանում նավակին և արքային ստիպում 5-րդ հորիզոնականը թողնել:

2. ... Աf5-f6

Նավակին արդեն ապատվել է իր նավանական պարտավորություններից և կարող է նոր դեր ստանձնել:

3. Նg4 - g6! Աf6-f7


4. Աh5 - h7! Աf7-f8

5. Նg6 - g8x

Ընչպես տեսանք, ծանր ֆիգուրներից մեկը հսկիչի դեր էր ստանձնում, իսկ մյուսը՝ զրոհում արքային, և այս դերերը նրանք պարբերաբար փոխում էին: Ընդհանրապես՝ թագուհին ու նավակը եզր ում են և ի վիճակի են արքային եզրը վանելու՝ նույնիսկ թույլ չտալով, որ վերջինս փոխի իր գրաված ուղղաձիգը (հորիզոնականը):

Գ. 71-ում սև արքան շ ուղղաձիգում է փակված, և սպիտակները կտրող են նրան մատ հայտարարել ինչպես շ1, այնպես էլ՝ շ8 դաշտում.

71




- | | |
|------------|--------|
| 1. Կd1-d5 | Աc3-c4 |
| 2. Թb1-b5+ | Աc4-c3 |
| 3. Կd5-d3+ | Աc3-c2 |
| 4. Թb5-b3+ | Աc2-c1 |
| 5. Կd3-d1x | |

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ.

Գ.71. Մատ հայտարարի՛ր սև արքային c8 դաշտում՝ թույլ չտալով, որ նահանջելիս՝ նա թողնի c ուղղաձիգը:

Ընդհանրապես՝ ուժերի սցսպիսի հարաբերություն դեպքում մատային արդյու նքի կարելի է հասնել նաև խաղատախտակի կենտրոնում, եթե ուժեղ կողմի արքան նույնպես ներգրավվի:

72




ԱՌԱՋԱԴՐԱՆՔ.

Գ.72-ում սպիտակները կարող են սև արքային երկու քայլից մատ հայտարարել՝ երեք տարրեր և դանակով: Գտի՛ր դրանք:

բ) Մատ երկու նավակով

Երկու նավակներն ի վիճակի են միայնակ արքային մատ հայտարարել, ինչպես և նախորդ դեպքում, առանց սեփական արքայի օգնության: Այս դեպքում ես՝ մատային վիճակ միայն խաղատախտակի եկրերում է, առաջանում, ուր նավակներն արքային ստիպում են նահանջել: Այստեղ էլ՝ նույն սկզբունքով, նախապես պետք է եկրը ընտրել:

73



Գ.73-ում սպիտակները որոշել են արքային 8-րդ հորիզոնականը վանել: Այդ նպատակով՝ նավակներից մեկը պետք է հսկիչի դեր ստանձնի, իսկ մյուսը՝ արքային իր գրաված հորիզոնականից հեռացնի.

1. Կh1-h3 ...

Զրկում է արքային 3-րդ հորիզոնականն անցնելու հնարավորությունից:

1. ... Աc4-f4

Արքան ձգտում է կենտրոնում իր դիրքը որքան հնարավոր է երկար պահպանել:

2. Կa1-a4 ! ...

Այստ նախակը արքային 4-րդ հորիզոնականից էլ է գրկում:

2. ... Աf4-g5

Այժմ հնարավոր չէ հաջորդ քայլով արքային 5-րդ հորիզոնականից վանելը՝ սպասողական քայլ պետք է կատարել:

3. Նh3-h4 Աg5-f5

Կամ 3...Աg6 4. Նa5!:

4. Նh4-h5+ Աf5-g6

5. Նa4-a5 Աg6-f6

6. Նa5-a6+ Աf6-g7

7. Նh5-h6 Աg7-f7

8. Նa6-a7+ Աf7-g8

9. Նh6-h7 Աg8-f8

10. Նh7-h8x (կամ 10. Նa8x)

Գու նկատեցի՞ր, որ նախակներն արքային եզրագիծ վանեցին՝ նույնիսկ չփոխելով իրենց գրաված ուղղաձիգները: Նույն արդյունքը կատարվեց, եթե սպիտակներն իրենց երրորդ քայլով հ ուղղաձիգի նախակը սև արքայից հեռացնեին և այնուհետև, նախակներով հաջորդաբար շախեր հայտարարելով, արքային 8-րդ հորիզոնականը վանեին: Օրինակ՝ 3. Նb3 (նախակը հեռանում է սև արքայից որքան հնարավոր է հեռու, իհարկև, ո՛չ a3 դաշտը, քանի որ այնտեղ դրա հետագա ճանապարհը a4-ում գտնվող սեփական նախակը կփակեր) 3. ... Աf5 (արքան շտապում է նորից նախակներին մոտենալու) 4. Նb5+ Աe6 5. Նa6+ Աd7 6. Նb7+ Աe8 7. Նaa7 Աd8 8. Նb8x (Նa8x):


Այս երկու եղանակներն էլ հեշտ են հիշվում, սակայն մատային արդյունքի կարելի է շատ ավելի արագ հասնել, եթե գրոհին նաև ուժեղ կողմի արքան ներգրավվի:

Օրինակ՝ 1. Նh1-h5 Աe4-f4 2. Նa1-a4 Աf4-g3 (2. ... Աf3 3. Նg 5) 3. Աe1-e2! Աg3-g2 4. Նa4-g4x:

ԱՌԱՋԱԳՐԱՆՔ.

Գ. 74-ում սպիտակներն սկսում են երկու քայլից սև արքային մատ ևն հայտարարում: Ինչպե՞ս:


74




գ) Մատ թագուհով

Ի տարբերություն նախորդ օրինակների՝ առանց սեփական արքայի աջակցության թագուհին միայնակ արքային մատ հայտարարել չի կարող: Այս դեպքում մատային արդյունքը միմիայն խաղատախտակի եզրերում է հնարավոր: Ահա՛ երկու բնորոշ մատային դիրքեր (դ.դ. 75, 76).

75




76



